ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ՎԱՐՔԻ ԴԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ. ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Էվոլյուցիոն տեսության և վարքաբանության (էտոլոգիայի) շրջանակներում համեմատաբար քիչ են անդրադարձել վարքի՝ որպես ինքնուրույն երևույթի զարգացմանը. վարքի դրսևորումները հիմնականում պայմանավորվել են կենդանու էվոլյուցիայի աստիճանով: Սակայն վերջին մի քանի տարում մեր գիտագործնական ուսումնասիրությունները համոզիչ փաստեր են մատուցում այն մասին, որ վարքը նույնպես ունի ինքնուրույն ձևավորման և փոխակերպման հատկություն: Մարդու ակտիվության կարևորագույն բաղադրիչներից են նպատակները, երազանքները, իմաստավորումը, երևակայությունը և հոգեկան այլ բարձրագույն նորագոյացություններ, որոնք «նոր գործիքներ» են թե՛ միջավայրին հարմարվելու, թե՛ միջավայրը միաժամանակ փոխելու համար: Պետք է խոստովանել, որ ժամանակակից մարդը հաճախ հարմարվում է միջավայրին՝ ավելի ու ավելի քիչ ազդելով նրա վրա: Խոսքը սովորական պասիվության մասին չէ, այլ առաջընթացի ժամանակավոր խափանման (տեղի է ունենում վարքային դեգրադացիա): Սա ոչ թե հոգեբանության մեջ հայտնի հետադիմության պաշտպանական մեխանիզմն է (ռեգրեսիվ վարք), այլ էվոլյուցիայի ավելի ցածր աստիճանի վարքի արթնացումը: Առաջինի դեպքում երևույթը օնտոգենետիկական է՝ պայմանավորված անհատական փորձով, երկրորդի դեպքում՝ ֆիլոգենետիկական՝ պայմանավորված տեսակի զարգացման օրինաչափություններով: Առաջինի դեպքում պաշտպանական մեխանիզմը անձի հարմարմանն է ուղղված, երկրորդի դեպքում տեղի ունի վերադարձ նախատիպային զգացողություններին, ապահովությանն ու հին տեսակի պահպանմանը: Չհակադրվելով էվոլյուցիոն տեսությանը, անգամ ընդունելով դրա մեթոդաբանությունը՝ մեր աշխատանքում քննարկվում են մարդու անհատական վարքի ձևափոխությունները՝ դարձերեսով. ոչ թե էվոլյուցիա, այլ դէվոլյուցիա, բայց ոչ թե փախուստ, այլ վերադարձ:

«Դէվոլուցիա» հասկացությունը մինչ այսօր կիրառվել է քաղաքագիտության մեջ՝ որպես կենտրոնական կառավարող մարմինների կողմից իրենց իրավասությունների փոխանցումը տեղական մարմիններին: Սակայն հոգեբանության մեջ մենք փորձ ենք անում «դէվոլյուցիա»

եզրույթը կիրառել՝ նկարագրելու մարդու վարքագծում նկատված նորահայտ երևույթները՝ առանձնահատուկ բաղադրիչներով։

Ուսումնասիրության առարկան մարդու վարքի դրսևորման և ձևափոխման էվոլյուցիոն բաղադրիչն է։ Նպատակը՝ դիտարկել մարդու անհատական վարքի դրսևորման և զարգացման պատահականությունը, որի պատճառով դժվարանում են վարքի էվոլյուցիայի գիտական կանխատեսումները։

Աշխատանքի խնդիրներն են.

- ձևակերպել և հիմնավորել «վարքի դէվոլյուցիա» հասկացությունը,
- վերլուծել մարդու անհատական վարքի գործառութային ձևափոխման նախապատճառներն ու սոցիալ-հոգեբանական մեխանիզմները,
- օրինակներով մատնանշել մարդու սիմվոլիկ և ծիսական վարքի հոգեբանական նախադրյալները,
- գիտագործնական ելքեր առաջարկել։

Ակնարկ հոգեկանի զարգացման մասին. Էվոլյուցիայի սիներգետիկ մեկնաբանություն

Էվոլյուցիան պետք է մեզ ներկայացնի նախամարդու գիտակցության վերջը և նոր մարդու գիտակցության սկիզբը, որոնք սերտորեն կապված և համախմբված են։ Ըստ Լ. Վիգոտսկու՝ բոլոր հոգեկան երևույթների ձևերը առաջացել են գրգռումից։ Կենդանի մատերիան իր զարգացման մինչհոգեկան մակարդակում բնութագրվում է գործառական հարաբերությունների մեջ՝ սովորական գրգռման յուրահատուկ ընդունակություններով՝ ի պատասխան պահանջմունքների ու նյութափոխանակության։ Եվ քանի որ օրգանիզմի համապատասխան փոխհարաբերությունները միջավայրի հետ ավելի բազմանշանակ են, քանակական նոր ձևեր են առաջացնում։ Դրանցից մեկը գրգռման նոր ձևն է՝ գրգռվածություն-զգայունություն[1]։ Զգայունությունը զգալու ունակություն է, հոգեկան երևույթի տարր։ Հոգեկանը սկսվում է այնտեղ, որտեղ առաջանում է յուրահատուկ գրգռման բարձրագույն ձևը՝ զգացողությունը։ Զոոփսիխոլոգիան սկսվում է մինչհոգեկանի և հոգեկանի հատման կետում՝ առաջնային զգայունակություն ունեցող ցածրագույն ներկայացուցիչների մեջ։ Ի տարբերություն կենդանիների՝ մարդու հոգեկանը այլ երևույթ է, սակայն այն գենետիկորեն արտացոլում է նաև կենդանիների հոգեկանը։ Հիմնական տարբերությունները պայմանավորված են հասարակական գործունեությամբ և խոսքի առկայությամբ։ Ժամանակակից հոգեբանության մեջ յուրաքանչյուր վարքաձև դիտարկվում է որպես երկարատև զարգացման արդյունք՝ պատմականո-

[1] Տե՛ս **Выготский Л. С.** Мышление и речь. М., 1999։

րեն կապված նախկին՝ ավելի ցածր ֆորմաների հետ: Առանց զոոփսիխոլոգիական արդյունքների դեռևս հնարավոր չէ անդրադառնալ մարդու ծագման հիմնախնդիրներին: Այն կենսաբանական անտրոպոգենեզի, մարդու նախապատմական գործունեության, հուզականության ու խոսքի ձևավորման ուսումնասիրության անհրաժեշտ հիմքեր է ստեղծում: Կենդանի օրգանիզմները կենսագործունեության և շրջակա միջավայրի հետ փոխհարաբերություններում էվոլուցիայի ընթացքում ձեռք են բերում «դժվարություններից խուսափելու» մեխանիզմներ: Ըստ Կ. Ֆաբրիի՝ սկզբից հոգեկանը ապահովում էր լոկ անբարենպաստ պայմաններից փախուստը, և այդ բնազդային վարքագիծը մինչ այսօր կարող ենք նկատել ժամանակակից պարզագույն կենդանիների մեջ: Էվոլյուցիոն ավելի բարձր մակարդակում, երբ արդեն սենսոր համակարգերի առաջացման հետ զգայական գործողությունները ապահովում են դժվարությունների հաղթահարումը, անհատական վարքային հարմարվողականությունը ավելի ցայտուն է դառնում՝ իր հետ զարգացնելով նաև ինտելեկտը[2]:

Ա. Ն. Լեոնտևը առանձնացրեց ավելի խորքային փոփոխությունների ընթացք, որն ընկած է զգայող ու ընկալող հոգեկանի սահմանագոտում: Այդ սահմանային տարրը հոգեկանի զարգացման մի փուլ է, որում գործողությունները բխում են կենդանիների կենսաբանական գործառույթներից (այլ զգացողությունների մակարդակում)՝ ոչ թե առանձին տարրական զգայությունների, այլ առարկաների ընդհանուր արտացոլանքների ձևերից[3]: Ըստ Լեոնտևի՝ հոգեկանի էվոլյուցիայի մի մակարդակը միշտ հենված է նախորդի վրա: Եվ միաժամանակ, հոգեկանի զարգացման հետ մեկտեղ առաջ են գալիս նոր՝ ավելի բարձր մակարդակի դրսևորումներ: Ըստ այդմ՝ նա հոգեկանի էվոլուցիան բաժանեց երեք փուլի՝ 1) սենսոր, 2) պերցեպտիվ, 3) ինտելեկտուալ: Համառոտ անդրադառնանք Լեոնտևի մեկնաբանություններին:

Սենսոր փուլի առանձնահատկությունն այն է, որ բնութագրում է հոգեկանի էվոլուցիայի ստորին մակարդակը, որտեղ գտնվում են պարզագույն կառուցվածք ունեցող օրգանիզմները, ինչպես նաև այնպիսի օրգանիզմներ, որոնք դասվում են բույսերի և կենդանիների միջին օղակում: Այս կենդանիների շարժումները տարբերվում են բազմազանությամբ: Պարզագույն օրգանիզմների մեծ մասը շարժվում է էֆեկտորային հատուկ օրգանների միջոցով (մտրակներ, թարթիչներ կեղծ ոտիկներ): Մինչ հատուկ էֆեկտների ի հայտ գալը կենդանիների տեղաշարժը տարածության մեջ կատարվում էր կծկման միջոցով, և այդ գործառույթն է ապահովել շարժողական ակտիվության բազմազանությունը ֆիլոգենեզի բոլոր փուլերում: Այս պարզունակ, բնազդական վարքային ակտը պայմանավորված է առաջնային դրդմամբ: Միաբջիջ

[2] Տե՛ս **Фабри К. Э.** Основы зоопсихологии. М., 2003:
[3] Տե՛ս **Леонтьев А. Н.** Эволюция психики. М., 1999:

օրգանիզմների և հոգեկան զարգացման տվյալ մակարդակում գտնվող ցածրագույն անողնաշարավորների կազմակերպման տարրերն են կինեզները և պարզագույն տաքսիսները, որոնք (գենետիկորեն) տարածության մեջ կողմնորոշվելու պարզագույն մեխանիզմներ են: Նրանց հարմարումը տեղի է ունենում ուսուցման տարրական մակարդակում՝ արտացոլելով իրականությունը միայն առանձին հատկություններով: Այս փուլին հատուկ են նաև բնազդային ու ժառանգական վարքաձևերը, որոնք ուսուցում չեն պահանջում: Ի տարբերություն ռեֆլեքսի՝ բնազդը ամբողջ օրգանիզմի պատասխանն է վարքային շաբլոններով, որոնք բացահայտվում են միանման գործողություններում:

Պերցեպտիվ փուլը բնութագրվում է պատկերների արտացոլումով, վարքը դառնում է ավելի բարդ (փորձի ամրապնդմամբ, շարժողական ունակությամբ, գործողության ամրապնդմամբ, գործողությունների ավտոմատ կատարման միջոցներով և վարժությունների ընթացքում ձևավորված միջոցներով): Առաջին անգամ շարժողական հմտություններ են բացահայտվում այն կենդանիների շրջանում, որոնք ունեն ուղեղի կեղև: Հմտությունները ձևավորվում են փորձի և սխալների միջոցով, իհարկե հնարավոր է նաև հմտությունների փոխանցում:

Ինտելեկտուալ փուլին հատուկ են այնպիսի հոգեկան գործընթացներ, ինչպիսին է առանձին տարրերի ընդհանուր արտացոլումը՝ որոշակի խնդիրների լուծումներով: Հանկարծ, երկարատև գործողություններից հետո, հնարավոր է դառնում դրական արդյունքներ ստանալ: Լուծումները հեշտությամբ տեղափոխվում ու օգտագործման են այլ իրադրություններում: Առաջին փուլում կենդանիները չունեն անմիջական արդյունքի հասնելու ձգտում, իսկ երկրորդը օգտագործող փուլն է, որում արդեն առկա է որոշակի նախատրամադրվածություն: Մարդու դեպքում ինտելեկտը արտացոլում է առարկաների ու խոսքի հետ էական կապը, որի շնորհիվ ձևավորվում է տրամաբանական մտածողությունը: Գոյություն ունեն մարդու հոգեկանի որակական հատկություններ, որոնք էապես տարբերում են նրան կենդանական աշխարհից: Այդ առանձնահատկությունները առաջացել են անտրոպոգենեզի և պատմամշակութային զարգացման ընթացքում և անմիջական կապ ունեն մարդու կենսաբանական զարգացման հետ՝ տանելով դեպի սոցիալականացում և գիտակցության ձևավորում:

Համակարգային օբյեկտների հետազոտման համար կարևոր է հաշվի առնել բարդացող և զարգացող իրադարձության կանխատեսման մեթոդաբանական պահանջը. տեսությունը պետք է ի վիճակի լինի կանխատեսելու ապագա իրադարձությունները այն հիմքով, որով նկարագրում և բացատրում է ընթացիկ իրադարձությունը[4]: Այս առումով էվոլյուցիոն տեսությունը կարծես բաց է թողնում զարգացման

[4] Տե՛ս **Крылов В. Ю., Морозов Ю. И.** Кибернетические модели и психология. М.: Наука, 1984, էջ 20-21:

հնարավոր դէվոլյուցիոն պահը (տվյալ դեպքում նկատի ունենք վարքի զարգացման ու կանխատեսման հիմքը)։

Բարդ համակարգերի ինքնակազմավորման գործընթացների ուսումնասիրման ժամանակ ամրագրվել է, որ համակարգի էվոլյուցիայի հնարավոր ուղիներից ոչ բոլորն են հավանական։ Բնությունը «անտարբեր» չէ. այն դրսևորում է «հակվածություն» որոշակի վիճակների։ Ըստ այդմ՝ սիներգետիկայում նշյալ համակարգերի վերջնական վիճակներն անվանվում են «ատտրակտորներ» (լատ.՝ attractio – ձգողություն)[5]։ Ատտրակտորը մի վիճակ է, որին ձգտում է համակարգը։ «Սիներգետիկայի արդյունքները կարծես մեզ վերադարձնում են հին մտածողների գաղափարներին։ Մասնավորապես դրանք մոտ են Պլատոնի պատկերացումներին՝ գաղափարների աշխարհում նախակերպարների ու կատարյալ ձևերի մասին, որոնց ձգտում են նմանվել տեսանելի և մշտապես անկատար աշխարհի իրերը։ Կամ էլ՝ էնտելեխիայի մասին Արիստոտելի պատկերացումներին. ինչ-որ ներքին ուժ, որ ներդրված է մատերիայում, ստիպում է նրան որոշակի ձև ստանալ»[6]։ Գերմանացի ֆիզիկոս-տեսաբան Հ. Հակենի խոսքով. «Ատտրակտորը այն կայուն կիզակետն է, որին միտվում են համակարգի դինամիկական հետագծերը»[7]։

Այս տեսանկյունից վարքի դէվոլյուցիան այն ատտրակտորն է, որին կիզակետվում են մարդու էվոլյուցիոն զարգացման հավանական հետագծերը։ Եվ դա կարող է արտահայտվել հենց այն ժամանակ, երբ մարդու անհատական վարքի նորմատիվ դրսևորումները և զարգացման միտումները դուրս են գալիս «կարգավորվածության կայուն վիճակից»։

Գ. Ա. Գոլիցինը և Վ. Մ. Պետրովը մաթեմատիկական մոդելավորման ճանապարհով պնդում են, որ կենսաբանական համակարգերում հակազդումների ընդհանուր բազմազանությունը շատ է այնքանով, որքանով քիչ է դրանց միջև կոռելյացիան կամ փոխադարձ ինֆորմացիան։ Այստեղից՝ առավելագույն ինֆորմացիայի ձգտումը պահանջում է հակազդումների միջև կոռելյացիաների նվազում։ Դա ապահովում է հակազդումների առավել մեծ բազմազանություն և օրգանիզմի հարմարում միջավայրին։ Հենց այս պատճառով է, որ ամեն պրոգրեսիվ զարգացում պայմանավորված է դեկոռելյացիայով, տարբերակմամբ, հակազդումների մասնավորեցմամբ։ Դեկոռելյացիան հնարավորություն է տալիս, որ յուրաքանչյուր հակազդում համարժեք պատասխան լինի հենց իր ազդակին և չխանգարի մյուսներին։ Էվոլյուցիայի ընթացքն ուսումնասիրելիս դիտվել է հակազդման հատկանիշների

---

[5] Տե՛ս http://philosophy-sd.narod.ru/synergetics.htm

[6] **Князева Е. Н., Курдюмов С. П.** Эволюция вселенной с точки зрения синергетики // http://spkurdyumov.ru/what/evolyuciya-vselennoj-s-tochki-zreniya-sinergetiki/

[7] **Можейко М. А.** Синергетика. Новейший философский словарь. М., 2003.

աստիճանական դեկոռելյացիա և օրգանիզմի առավել լիարժեք հարմարում միջավայրին: Այսպիսով, հակազդումների միջև փոխադարձ կոռելյացիան (նաև դրանց կրկնվողությունը, կանոնավորությունը, համաչափությունը) կենսաբանական էվոլյուցիայի նվաճումը չէ, այլ ավելի շուտ «բացթողումն է»: Դա ֆիզիկական աշխարհի ժառանգությունն է, որին առավելապես հատուկ է ձգտումը հավասարակշռության, պարզության, համաչափության: Կենսաբանական էվոլյուցիան փախուստ է հավասարակշռությունից, համաչափության խախտում է, առաջնային պարզ կոռելյացիաների ավերում և դրանց փոխարինումն ավելի բարդ հարաբերություններով: Էվոլյուցիայի այս միտումը շարունակվում է նաև մարդու պատմության, հոգևոր, մշակութային աշխարհի զարգացման մեջ, տեխնիկայում, գիտության և արվեստի մեջ[8]:

Զարգացման ընթացքում առանձին ենթահամակարգերը ոչ թե պարզապես միավորվում են ամբողջական համակարգին, այլ ձևավորում են ենթահամակարգերի որոշակի հիերարխիա: Դրանցից յուրաքանչյուրը օժտված է ամբողջի շրջանակներում գործառական ինքնուրույնությամբ: Որպեսզի նոր համակարգ առաջանար, կպահանջվեին հսկայական քանակությամբ պարզ տարրերից մեծ քանակությամբ համադրություններ: Իսկ երբ համակարգը ներկայանում է իր հիերարխիկ կազմակերպված ենթահամակարգերով, ապա հնարավոր համադրությունների քանակը կտրուկ նվազում է[9]:

Այս մոտեցումը կիրառելով՝ վստահաբար կարող ենք պնդել, որ վարքը (որպես էթոլոգիական միավոր) թե՛ կենսաբանական, թե՛ սոցիալական համակարգերի ամբողջությունների շրջանակներում կարող է ունենալ գործառական ինքնուրույնություն:

[8] Տե՛ս **Голицын Г. А., Петров В. М.** Информация – Поведение – Творчество. М., 1991, էջ 29:

[9] Տե՛ս **Рузавин Г. И.** Диалектическая концепция развития и синергетика // "Философские исследования", 1999, 3, էջ 51–69:

Դէվոլյուցիան որպես վարքի սոցիալ-մշակութային պայմանավորվածության խզում

Նախորդ դարի կեսերին թուրքական մի ընտանիքում (այնուհետև՝ Բրազիլիայում և Իրանում) նկատվեց մի երեվույթ. ընտանիքի անդամները քայլում էին մարդուն ոչ բնորոշ՝ բացառապես չորեքթաթ: Սակայն նրանց համար այդպիսի շարժումը բավականին հարմարավետ էր. վազում էին ավելի լավ, քան սովորական մարդը երկու ոտքով: Իհարկե, նրանց բժշկական օգնություն են ցուցաբերել, սակայն երբ նրանք նորից վերադարձել են իրենց առօրյա կյանքին, անմիջապես անցել են իրենց նախկին դիրքին:

Նրանց ոսկորների կառուցվածքում էլ են նկատվել փոփոխություններ: Սակայն պետք է նշել, որ այսպիսի դրսևորումները մշակութային կամ դաստիարակչական ազդեցության հետևանքներ չեն: Այն բնածին գենետիկական երևույթ է, որը ուսումնասիրություններով պարզաբանվեց ու ստացավ «Յուներ Տանի համախտանիշ» («Uner Tan Syndrome») անվանումը: Այդ մարդկանց շրջանում հայտնաբերվեց VLDLR գենային մուտացիան՝ 17-րդ քրոմոսոմում, որը պատասխանատու է ուղեղի կեղևում նեյրոբլաստի միգրացիայի համար՝ ապահովելով մարդու ճիշտ կողմնորոշումը և նորմալ կեցվածքը: Առկա էր նաև



խոսքի հետզարգացում (մինչև 100 բառ), ինչպես նաև կանգնած դիրքում ձեռքի մկանների գերլարում[10]:

Ռուսաստանյան մի ընտանիքում հարբեցող ծնողների մանկահասակ երեխաները բարձիթողի վիճակում ընդօրինակել են բնակարանում պահվող շների վարքագիծը՝ թե՛ խաղալու, թե՛ ուտելու, թե՛ քնելու և թե՛ շփվելու: Այս դեպքին, սակայն, չի կարելի տալ «Uner Tan Syndrome» ախտորոշումը:

Համեմատելով այս օրինակները և հնարավոր շփոթությունից խուսափելու համար նշենք, որ վերոնշյալ համախտանիշը թեև նման է դէվոլյուցիայի, սակայն այն գենային խաթարման դրսևորում է: Իսկ երկ-

[10] Տե՛ս «Деволюция или назад на четвереньки». http://elvensou1.ru/devolyutsiya-ili-nazad-na-chetverenki/

որդ օրինակը՝ սոցիալ-մշակութային պայմանավորվածության մտավոր ու վարքային դեգրադացիան, առավել քան համապատասխանում է դէվոլյուցիայի մասին մեր ըմբռնմանը։

Դէվոլուցիա բառը կիրառել է նաև ամերիկացի գրող, հրապարակախոս և հինդուիստական կրեացիոնիստ Մայքլ Կրեմոն։ Նա նշում է. «Մենք ավելի շատ ինֆորմացիա ունենք դասական էվոլուցիայի մասին, իսկ կենդանության այլընտրանքային ծագման հարցին առհասարակ քիչ ենք անդրադառնում։ Մեր այժմեական վիճակը դէվոլյուցիոն է, քանի որ առաջներում մենք եղել ենք ավելի կատարյալ…»[11]։ Սակայն Կրեմոյի մոտեցումը ավելի շատ կրոնափիլիսոփայական ու սոցիալ-բարոյագիտական բնույթի է և շատ քիչ առնչություն ունի վարքաբանական ու հոգեբանական մոտեցումներին։ Մենք շեշտերը դնում ենք վարքային դրսևորումների վրա (շարժում, արարք, ձայնարկություն, հայացք և այլն)։

Դէվոլյուցիայի մասին խոսելիս ևս մեկ անգամ հիշենք, որ սա վարքի ռեգրես չէ օնտոգենեզում, այլ վերադարձ, ֆիլոգենետիկական վերհուշ՝ պարուրված դրական հույզերով։ Դէվոլյուցիան ծավալվում է ինչպես սոցիալ-մշակութային միջավայրի գործոնների ներքո, այնպես էլ միջավայրի վրա հետադարձ ազդեցությունով, որը, շնորհիվ դրական ամրապնդումների կարող է մնայուն դառնալ։ Դէվոլյուցիոն վարքի սուբյեկտը դառնում է նաև ընդօրինակման աղբյուր։ Ավելին՝ որոշ դեպքերում դէվոլյուցիոն բնույթի վարքը ակամա կարող է քարոզվել ԶԼՄ-ներով և մշակույթի տարածման այլ միջոցներով (ավանդական պարաշարժումներ, դիմակահանդեսներ, զանազան շոուներ, ֆիլմեր, ներկայացումներ, տոնակատարություններ, ծեսեր, սեռականության չափազանցում և այլ արխայիկ դրսևորումներ)։

Մենք կարծում ենք, որ հոգեբանության մեջ ընդունված «կոմֆորտի զոնա» երևույթի արմատները ձգվում են մինչև վարքի դէվոլյուցիա։ Էվոլյուցիոն տեսության սկզբունքի համաձայն՝ առանձնյակը ձգտում է առավելագույն հարմարման՝ միջավայրի պայմաններում որևէ փոփոխություն չմտցնելով։ Արդյունքում, ի հաշիվ իր բնատուր պաշարների, կա՛մ գոյատևում է, կա՛մ կործանվում։ Այս սկզբունքը կարելի է կիրառել սոցիոմշակութային միջավայրի «առանձնյակի»՝ մարդ-անհատի նկատմամբ։ Խոսքը ոչ թե իրադրային, այլ մշտական հարմարավետության կապանքների մասին է։ Ինչպես ասում են՝ առաջընթացի բացակայությունը հետընթաց է։

Վարքի դէվոլյուցիա կարելի է նկատել՝ դիտարկելով, օրինակ, տղամարդկանց վարքն ու դիրքը վիճաբանության ժամանակ. կուրծքը առաջ, գլուխը վեր, ձեռքերը մարմնից հետ թափահարող սուբյեկտը

[11] Տե՛ս **Кремо Майкл А.** Деволюция человека: ведическая альтернатива теории Дарвина // https://www.ereading.mobi/bookreader.php/30277/KremoDevolyuciya_cheloveka_Vedicheskaya_al%27ternativa_teorii_Darvina.html

հիշեցնում է ագրեսիվ թռչունի։ Մարդու համար այս դիրքերն ու շարժումները ինքնապաշտպանության կամ հարձակման առումով անարդյունավետ են, նույնիսկ՝ խոցելի։ Մեկ այլ օրինակ է մարդու՝ զգաստ, որովայնը հետ քաշած, ձեռքերը մարմնի ուղղությամբ կլորացրած դիրքով մարմնին զանգվածեղ տեսք հաղորդելը։ Սա կարող է ուղեկցվել բղավոցներով կամ ճիչերով։ Հայաստանում նախընտրական արշավների ժամանակ թեկնածուների հրապարակած լուսանկարներում հաճախ կարելի է նկատել «ալֆա արուի» կերպարին բնորոշ հատկանիշներ. առաջ ցցված կզակ, լարված ծնոտ, զգոն ու ջղային հայացք, փքված այտեր, բարձրացված ուսեր՝ իրեն ծավալ հաղորդած դոդոշի կամ վարազի տեսքով։

Նույն երևույթի կանացի տարբերակներն էլ կան. մարմնի տարբեր մասերի արհեստական մեծացումներ, երկրորդային սեռական հատկանիշների ընդգծում, թույլի և հնազանդվողի դիմախաղ, սիրային մարտահրավերի շարժումներ կամ կեցվածք հակառակ սեռի ներկայացուցիչներին և այլն։ Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց սեռականության վարքային ցուցադրումները իրենց արտահայտությունն են ունենում նաև սեռական մերձեցումների ժամանակ՝ համապատասխան կենդանական զգացողություններով։

Առօրյայում ոչ հազվադեպ կարելի է ականատես լինել այնպիսի դեպքերի, երբ մարդիկ առանց անհրաժեշտության հանկարծ սկսում են ուտել ձեռքերով՝ առանց հետևելու քաղաքավարության կանոններին, նույնիսկ ընթացքում արձակելով տարօրինակ ձայներ։ Դրանք հավանաբար ուղեկցվում են հաճույքի ապրումներով։ Կարող ենք ենթադրել, որ հոտի, համի և այլ պերցեպտիվ գործընթացների շնորհիվ արթնանում է վարքի այնպիսի պատտերներ, որոնք հատուկ են նախամարդուն կամ էլ կենդանուն։ Այսպիսի վարքի նախանմուշները երբեմն էթիկապես փոխակերպվում և ամրագրվում են սովորույթների ու ծեսերի մեջ։ Սիմվոլիկ կամ ծիսական վարքաձևերը քաղաքակրթական, պատմական, էվոլյուցիոն բնույթ են կրում՝ արտահայտելով հնագույն վարքի սոցիալականացված և մշակութականացված փոխակերպումները։ Դէվոլյուցիոն վարքը էտոլոգիական միավոր է, որն արտահայտում է բնազդային վարքի հետադարձը։

Հիշարժան օրինակ է. Առինջ գյուղում մի գյուղացի, ձմեռվա կարտոֆիլ պահպանելու համար մի փոքր հոր փորելով, անընդհատ փորելու պահանջ է զգացել այն աստիճան, որ այն վերածել է անդրերկրյա դղյակի։ Այդտեղ նա իրեն շատ լավ էր զգում, երջանիկ, շրջապատից ստանում էր գովեստի խոսքեր, նույնիսկ վերածել էր այն սրբավայրի։ Փաստորեն, ձեռքի աշխատանքի շնորհիվ առաջացել է շփում հողի հետ (խոնավության, հպման, հոտերի զգացողություններով)։ Միաժամանակ խավարը, լռությունը արթնացրել են ներդաշնակության այնպիսի հուշեր և հույզեր, որոնք ավելի ու ավելի մեծ ցանկություն են ա-

ռաջացրել վերադառնալու դեռ այն ժամանակները, երբ նախամարդիկ ապրում էին քարանձավներում: Կարելի է կարծել, որ նա իրեն դրսևորել է ոչ ադեկվատ: Սակայն իր համար դա իդեալական հոգեկան վիճակ է եղել, քանզի ամեն գործողությունից հետո նա պարգևատրվել է սնունդով, գովասանքի խոսքով և այլն...

Մեր պրակտիկայում դիտարկել ենք մարդկանց, որոնց այս կամ այն զգայարանը գործառույթի թուլացման պատճառով չի փոխարինվել մյուս զգայարանների ակտիվությամբ, ինքնըստինքյան սկսել են ներփակվել, չշփվել մարդկանց հետ: Սա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ սոցիալական շրջապատը դարձել է լիարժեք հարմարման անբարենպաստ պայման: Այս անձանց շրջանում ոչ միայն վարքային դէվոլյուցիա է արտահայտվել, որը ակնհայտ է եղել մարմնի շարժումներում և դիմախաղում, այլև նկատվել են ֆիզիոլոգիական որոշ փոփոխություններ և հենաշարժողական աղավաղումներ:

Հումակերներից ոմանց հետ մեթոդական զրույցով պարզել ենք, որ նրանք, «առողջ ապրելակերպից» ու որոշ համոզմունքներից զատ, ունենում են նաև ինչ-որ տեսակի ապրումներ, որոնք հենց իրենք նմանեցնում են ժամանակների մեջ ճանապարհորդելուն, երբ դեռ մարդկությունը չէր հայտնաբերել կրակ ստանալու ձևերը: Եվ այդ «վերադարձը» կարծես կյանքի նոր սկիզբ լինի նրանց համար: Մենք ասես մոռացել ենք մեր նախնիների հմտությունները և պահանջմունքների բավարարման անմիջական ճանապարհները: «Արխայիկ պաշարներն» ու ուժերը վերականգնելու համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում վերադառնալու այն հոգեվիճակին, երբ մարդիկ սնվում էին հում պտուղներով կամ հավաքվում էին խարույկի շուրջ՝ ճաշակելու որսը, որը նաև միավորում էր նրանց: Հաճախ մարդիկ իրենց երևակայորեն նույնացնում են ինչ-որ կենդանիների հետ (խոսքը թե՛ առողջ, թե՛ հիվանդագին դրսևորումների մասին է): Նրանք հաճախ նաև այդ կենդանիներին բնորոշ շարժումներ են կրկնում՝ վերապրելով ինչ-ինչ զգացողություններ: Այս ամենը կարող է ուղեկցվել ծիսական շարժումներով՝ իր հերթին ամրագրելով համապատասխան դէվոլյուցիոն վարքագիծը: Դրանք, մշակութային բազմաշերտ զտիչներով անցնելով, փոխարինվում են զանազան արտեֆակտերով: Նաև իրենց արտահայտությունները գտնում են, օրինակ, հեքիաթի այն կերպարներում, որոնք կենդանիների կամ այլ էակների վերածվելու հատկութ-

յուն ունեն, կամ, օրինակ, որոշ մարտարվեստներում՝ կենդանիների արդյունավետ շարժումներն ընդօրինակելու։

Օրինակների շարքում կարելի է դիտարկել անձանց պիտակավորումներն ու մականունները՝ որևէ կենդանու նմանեցնելով, ինչը շատ դեպքերում կրողը ինքն է իր համար ընտրում։ Ժամանակի ընթացքում մականունը կարող է իր «դաջվածքը» թողնել անձի ոչ միայն բնավորության որոշ գծերի, այլև շարժումների և ներքին ապրումների վրա՝ դրսևորվելով կոնկրետ իրավիճակներում։ Իհարկե, այդ անունը պատահական չէ, որ տրվել է այդ մարդուն. դա ոչ միայն իրեն ինչ-որ այլ բանի նմանեցնելու հարց է, այլև անվանողի պրոյեկցիան անվանակրի վրա։

Մարդու և կենդանու վարքի նմանությունների ու տարբերությունների, ինչպես նաև մարդու վարքի էվոլյուցիայի փուլերի հիմնախնդիրը նորովի հետազոտման, նոր տեսանկյունների բացահայտման կարիք ունի։ Այս առումով բարձրացվող հարցերը իրոք արդիական են և կարող են նպաստել վարքի ինքնուրույն ձևափոխման հատկություններին առավել խորքային ուսումնասիրմանը։ Մասնավորապես, վարքի ուսումնասիրման պարագայում դէվոլյուցիայի գաղափարը կարող է նպաստել վարքի սոցիոմշակութային շարժառիթների շրջանակում բացահայտելու ակտիվացնող այնպիսի գործոններ, որոնք հատկապես էկզիստենցիալ իրավիճակներում մարդուն օգնում են հարմարվելու՝ «սոցիոմշակութային մեխանիզմները» լրացնելով ինչ-ինչ կենդանական արքետիպերով։ Ընթերցողը այս օրինակների ներքո արդարացիորեն կարող է իմաստային զուգահեռներ տանել «տոտեմի» գաղափարի հետ։ Սակայն այս աշխատանքում մենք անդրադառնում ենք լոկ անհատական և ոչ թե խմբային վարքի դրսևորումներին։ Իսկ պատմամշակութային և սոցիալ-հոգեբանական անդրադարձները, հուսով ենք, կշարունակվեն մեր հետագա ուսումնասիրություններում։

Զարգացման ու բարդացման ուղին ավանդաբար կապված է տեղի ունեցող դեպքերի անդարձելիության, անշրջելիության հետ՝ ինչպես ժամանակային, այնպես էլ իմաստային առումներով։ Նոբելյան մրցանակակիր, բնագետ-փիլիսոփա Ի. Պրիգոժինը պնդում էր. «Անշրջելիությունը սկսվում է այն ժամանակ, երբ էվոլյուցիայի ենթարկվող համակարգի բարդությունը գերազանցում է որոշակի շեմ, իսկ անշրջելիության կամ ժամանակի միակողմանի սլաքը իր հետ բերում է պատահականություններ[12]»։ Այստեղ գործ ունենք էվոլյուցիայի բարդության աստիճանի, զարգացման և ժամանակի միակողմանիության փաստերի հետ։ «Ո՞ր ճանապարհով կընթանա համակարգի հետագա զարգացումը, հենց որ հասնի բիֆուրկացիոն կետին… Ի՞նչ ձևով է համակարգը ընտրում… Այդ ընտրության մեջ անխուսափելիորեն առկա է պատա-

[12] **Пригожин И., Стенгерс И.** Порядок из Хаоса. М., 1986, с. 300.

հականության տարրը։ Դժվար է կանխատեսել, թե որ հետագծով կընթանա էվոլյուցիան»[13]։

Ուրեմն, եթե նկատում ենք մարդու վարքի դէվոլյուցիայի երևույթ, ապա նշանակում է, որ մարդու վարքի էվոլյուցիան դեռևս չի հասել իր անշրջելիության, ինչպես նաև բիֆուրկացիոն կետին։ Ուստի պետք է վերանայել ու վերաիմաստավորել «պարզի ու բարդի» որոշման հարցը։ Համոզված ենք, որ մտային ու վարքային բաղադրիչները կենսաբանականից հարաբերականորեն անկախ (պատահական կամ անկանխատեսելի) զարգացումներ ունեն և, դիտարկվելով առանձնացված, հնարավոր են դարձնում այսուհետ ավելի խորքային անդրադարձ կատարելու մարդկային կյանքի հոգևոր ճգնաժամերին ու սահմանային վիճակներին, վարքային շեղումներին ու շտկման աշխատանքներին, հոգեթերապիային, ինչպես նաև անձի զարգացման ուղղություններին կենդանիների վարքի ու հոգեկանի հետ համեմատականներ անցկացնելիս։

Եզրակացություն

1. Մարդու էվոլյուցիան հնարավոր է (և պետք է) դիտարկել ոչ միայն կենսաբանական մոդելներով, որոնցում ածանցյալ տեղ է զբաղեցնում հոգեկանի զարգացումը, այլև կոգնիտիվ-վարքաբանական մոդելներով, որոնք հարաբերականորեն անկախ զարգացումներ ունեն։

2. Մարդու վարքի դէվոլյուցիան սոցիալ-մշակութային (նորմատիվային) վարքի խզում է։ Սիմվոլիկ կամ ծիսական վարքաձևերը, որքան էլ անսովոր լինեն, այնուհանդերձ վարքի էվոլյուցիայի արդյունք են։ Իսկ դէվոլյուցիոն վարքը բնութագրվում է որպես բնազդային անհատական վարքի արխայիկ շրջադարձ։

3. Մարդու հոգեկան էվոլյուցիան դեռևս չի հատել զարգացման անշրջելիության կետը, որի վկայությունն է դէվոլյուցիան. որոշակի սահմանային իրավիճակներում ի հայտ են գալիս ֆիլոգենետիկական և անտրոպոգենետիկական բնույթի վարքի նախնական նմուշներ (պատտերներ), որոնք ապահովում են միջավայրում մարդու հարմարումը ոչ նորմատիվային ձևերով։

4. Վարքաբանության և հոգեբանության մեջ դէվոլյուցիայի տեսության մշակումը կարող է նպաստել վարքի սոցիոմշակութային նոր շարժառիթների, էկզիստենցիալ իրավիճակներում մարդու հարմարման լրացուցիչ գործոնների հայտնաբերմանը։

5. Դէվոլյուցիոն վարքի տարրերի ճանաչումը կօգնի հոգեբան-հետազոտողներին և պրակտիկներին առավել ընդգրկուն ու ամբողջական հասկանալու մարդու վարքի փոխակերպումները և կանխատեսելու արարքի հետագա զարգացումները։

6. Դէվոլյուցիան կարող է ունենալ նաև դրական ազդեցություն։

[13] Նույն տեղում։

Հայտնվելով այդ վիճակում՝ անձը ակամա կարող է արթնացնել բնազդային վարքի այնպիսի հատկություններ, որոնք էֆեկտիվ կիրառություն կստանան ճգնաժամային իրավիճակներում հարմարվողական և հաղթահարող վարքագծերի կազմակերպման գործում: Այդ հատկությունները կարող են թերապևտիկ էֆեկտներով նպաստել նաև հոգեմարմնական վերականգնողական գործընթացներին:

Բանալի բառեր – *էվոլյուցիա, վարքի դէվոլյուցիա, վարքանմուշ, ծիսական և սիմվոլիկ վարք, հետադիմության պաշտպանական մեխանիզմ*

РАЧЬЯ ОГАННИСЯН, АРМЕН БАРСЕГЯН – ***Деволюция человеческого поведения: этолого-психологический анализ.*** – В исследовании речь идёт о формировании человеческого поведения как относительно самостоятельного явления. Для описания нового явления, замеченного авторами в поведении человека, впервые в психологии используется термин «эволюция». Тем не менее, не противореча её теории, даже принимая её методологию, изменения в поведении человека рассматриваются с точки зрения деволюции. Но это не бегство, а возвращение...

В теории эволюции и этологии почти не говорится о развитии поведения; поведение прилагается к эволюционному уровню животного. В исследовании же утверждается, что поведение имеет и свойство изменяться независимо. Эволюцию человека можно и следует рассматривать не только с точки зрения биологических моделей, где психическое развитие занимает производное место, но и с точки зрения когнитивно-поведенческих моделей с их относительно независимыми ходами развития. Современный человек, постепенно приспосабливаясь к своему окружению, воздействует на него всё реже и реже. Речь не о простой пассивности, а о нарушениях прогресса с ухудшением эффективности поведения. Это не регрессивный защитный механизм (регрессивное поведение), а пробуждение более низкого уровня эволюционного поведения. В первом случае феномен является онтогенетическим, во втором – филогенетическим. В первом случае защитный механизм направлен на адаптацию человека, во втором речь идёт о возврате к прежним ощущениям безопасности и сохранению древнего вида.

Эволюция психики ещё не прошла точку невозврата: в некоторых пограничных ситуациях появляются ранние модели (паттерны) поведения с филогенной и антропогенной природой.

Ключевые слова: *эволюция, деволюция поведения, паттерн, ритуальное и символическое поведение, защитный механизм регрессии*

HRACHYA HOVHANNISYAN, ARMEN BARSEGHYAN – ***Devolution of Human Conduct: Ethological and Psychological Study.*** – The article deals with the formation and manifestation of human conduct as a relatively independent devolution phenomenon. It is the first time that we have used the term ‘Devolution’ in Psychology for describing a new phenomenon that we have noticed in human conduct. Not contradicting the theory of evolution, even accepting its methodology, we discuss the changes in human conduct in terms of devolution rather than evolution. Not the escape, but return…

In the theory of evolution and ethology, it is hardly spoken about the development of the conduct. Mainly, the conduct is connected with the evolutional level of an animal, but we think that conduct also has the feature of changing independently. Human evolu-

tion can be viewed (and should) not only from the perspective of biological models where psychic development occupies a derivative place but also from cognitive-behavioral models, which have relatively independent developments. Very often a contemporary man adjusting to his environment, and gradually he impacts it less and less. We don't speak here about simple passivity but about the impediment of progress with the degradation of conduct taking place. It is not a commonly known regressive defense mechanism (regressive conduct), but an awakening of a lower level of evolutional conduct. In the first case, the phenomenon is ontogenetical, in the second one-phylogenetic. In the first case, the defensive mechanism is directed towards the adaptation of a person, in the second case, we talk about a return to previous sensations of security and preservation of ancient species.

Human psychic evolution hasn't crossed the point of irreversibility: in some borderline situations, there appear early patterns of conduct with phylogenic and anthropogenic nature, which secure human adaptation in his environment by non-normative forms.

Key Words: *evolution, conduct devolution, pattern, ritual and symbolic behavior, defense mechanism of regression*

Ներկայացվել է՝ 27.09.2019
Գրախոսվել է՝ 31.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019